

ՍԻՐԱՆՈՒՇ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
հայ նոր գրականության բաժնի վարիչ
siranutsh.margaryan.71@mail.ru
ORCID ID: 0000-0003-1009-3514
DOI: 10.54503/978-5-8080-1557-9-211

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ ԵՐԿԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՖՈԼՈԳԻԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

*Բանալի բառեր՝ Գարեգին Սրվանձտյանց, միֆոլոգիական դպրոց,
«Գրոց ու բրոց», «Մանանա», «Թորոս աղբար Հայաստանի ճամփորդ», ազգա-
յին գոյաբանություն, պատմական ու մշակութային ծածկագրեր*

Ներածություն

Միֆոլոգիական կամ առասպելաբանական դպրոցը հումանի-
տար որոշ գիտությունների, առավել լայն իմաստով մշակութաբանությ-
յան մեջ կայուն ու հիմնարար փիլիսոփայական-գեղագիտական մե-
թոդ-համակարգ է, որի սկզբունքները ձևավորվեցին գերմանական
վաղ ռոմանտիզմի շրջանում՝ իրենց քաղաքական ու մշակութային մեծ
նշանակությամբ հեղաշրջելով մտավոր շարժման ողջ ընթացքը՝ լեզ-
վաբանություն, գրականություն, արվեստ, հասարակական գիտություն-
ներ ևլն:

Սույն ուսումնասիրության մեջ միֆոլոգիական դպրոցի լույսի ներ-
քո քննության են առնվել XIX դարի 60–80-ական թվականների խոշո-
րագույն ազգագրագետ, բանահավաք, մանկավարժ ու հասարակա-
կան գործիչ Գարեգին Սրվանձտյանցի գրական-գեղարվեստական մի
քանի երկեր: Առանձնացվել են «Գրոց ու բրոց», «Մանանա», «Թորոս
աղբար Հայաստանի ճամփորդ» գործերը և հայկական էպոսի՝ «Սա-
սունցի Դաւիթ կամ Մհերի դուռ» վիպերգության՝ Սրվանձտյանցի գրա-
ռած առաջին տարբերակը:

Հետազոտության նպատակն է՝ ա. ցույց տալ, թե միֆոլոգիական ու առասպելապատմական ինչ ահռելի շերտ է ընկած Սրվանձտյանցի գրառած հայկական աշխարհակառույցի, ազգապատումի հիմքում, բ. ազգագրագետ-բանահավաքի տարբեր երկերում ցրված բանահյուսական ու ազգագրական նյութը, ժողովրդական բանաստեղծությունը, հեքիաթներն ու զրույցները դիտարկել մեկ ընդհանուր համակարգում՝ ըստ ուսումնասիրության գիտական հարցադրման ու ըստ դիցաբանական դպրոցի տիպային ու թեմատիկ խմբավորումների, գ. ներկայացնել, թե դրանցում առկա պատմական ու մշակութային ծածկագրերը որքան են համապատասխանում միֆոլոգիական դպրոցի պատմա-տիպաբանական հարացույցին:

Ուսումնասիրության խնդիրներն են՝ ա. զուգադրաբար քննել, թե ինչպե՞ս է ազգային ժառանգության առասպելական ու պատմական շերտը ժամանակի տարբեր փուլերում ծնում իր նույնությունը՝ ձևաբանվելով ըստ պատմական շրջափուլի առաջադիր գաղափարի և ըստ գեղագիտական գործառույթի, բ. ներկայացնել էպիկական ավանդության անցյալի ու ներկայի կապը, տիպաբանորեն կայուն, հանգուցային հաղորդագրությունները, պատմամշակութային ծածկագրերի գործառույթը, գ. ըստ միֆոլոգիական դպրոցի հայեցակարգի ցույց տալ ազգային կենսագրության միասնականությունը, ոգու ֆենոմենոլոգիան, որը թույլ չի տվել ազգային պատմության քայքայումը փոքրիկ, մեկուսացած ժամանակային շերտերի մեջ:

Եզրակացություններում ներկայացվել են հետազոտության արդյունքները:

Ակնարկ դիցաբանական դպրոցի պատմության

Դիցաբանական դպրոցի ձևավորումը կապվում է XIX դարասկզբին Եվրոպայում, մասնավորապես Գերմանիայում պատմական ու մշակութային կյանքի, քաղաքակրթական մոդելների շրջադարձային փոփոխությունների հետ և առնչվում է ռոմանտիզմի գրական ավանդույթին: 18–19-րդ դարերի սահմանագծին, պատմական, սոցիոլոգիական ու փիլիսոփայական գիտությունների զարգացման ու նոր ձևավորվող դրապաշտական աշխարհայեցության արդյունքում առաջին պլան է մղվում լուսավորիչների ու ռոմանտիկների մշակած գիտության, մշակույթի ու գրականության փուլային զարգացման տեսությունը՝ ռոմանտիկական

հերմենևտիկայից անցում կատարելով դեպի պատմականության հիմնարար սկզբունքներ:

Իտալացի փիլիսոփա, գրականագետ, պատմական շրջափուլերի հանրահայտ տեսության հիմնադիր Ջանբատիստո Վիկոն դեռևս 1725 թվականին իր հանրահայտ՝ «Ազգերի ընդհանուր բնույթի մասին նոր գիտության հիմունքներ» աշխատության մեջ պնդում էր, թե մարդկությունը անցել է զարգացման երեք փուլ՝ աստվածների, հերոսների և մարդկանց, որոնց համապատասխանում են գրականության երեք՝ դիցաբանական, էպիկական և ռացիոնալ դարաշրջանները, տեսություն, որը, շարունակաբար հարստանալով և նոր դրույթներով նորոգվելով, մեծ ազդեցություն ունեցավ եվրոպական փիլիսոփայական ու գեղագիտական մտքի հետագա զարգացման վրա¹՝ հետզհետե ներառելով հոգեբանական, փիլիսոփայական, սոցիալ-լեզվաբանական և այլ հայեցակարգերի ամբողջական հարացույցը:

Այդ ազդեցությունն ինչ-որ չափով արդեն նկատելի է Ֆրիդրիխ Շիլլերի հասուն շրջանի լավագույն աշխատանքներից մեկում՝ «Նաիվ և սենտիմենտալ պոեզիայի մասին» էսսեում (1794):

Հրապարակի վրա հայտնվում են գերմանական նախառոմանտիկների այնպիսի հռչակավոր աշխատություններ, ինչպիսիք էին Յոհան Գոթֆրիդ Հերդերի «Գաղափարներ մարդկության պատմության փիլիսոփայության շուրջ» (մաս 1–4, 1784–1791), տարբեր ժողովուրդների երգերից հավաքված «Ժողովուրդների ծայները երգերում» (1778–1778) գրքերը, ապա բանաստեղծներ Առնիմի և Բոենտանոյի «Տղայի հրաշալի սրինգը» ժողովրդական երգերի հայտնի ժողովածուն, Հեռեսի «Հնագույն գերմանական ժողովրդական գրքերը» (1807) և այլն, որոնց մեջ ըստ մշակույթի զարգացման պատմականության դրույթի խնդիր էր

¹ Դիցաբանական դպրոցը շուրջ երկուհարյուրամյա գոյության ընթացքում ստեղծել է իր պատմությունն ու տեսությունը՝ գրեթե բոլոր մանրամասների մեջ ներկայացնելով մեթոդի իմացաբանական և գեղագիտական յուրահատկությունները: Մեր ուսումնասիրության մեջ թռուցիկ անդրադառնում ենք դպրոցի տեսությանն այնքանով, որքանով այն առնչվում է Սրվանձտյանցի գործերի՝ այս հայեցակետից քննությանը: Դիցաբանական դպրոցի պատմության մանրամասները տե՛ս՝ **Академи-ческие школы в русском литературоведении**, Москва, изд.-во «Наука», 1976, 576 с., **Քալանթարյան Ժ.**, Հայ գրականագիտության պատմություն, Եր., ԵՊՀ հրատ., 1986, 417 էջ, **Գրականության տեսության արդի խնդիրներ**, Գրականություն և միֆ, Սեմիրջյան-Բեքմեզյան Ա., Եր., ԵՊՀ հրատ., 2016, էջ 96–136 և լին:

դրվում «ամեն ինչ քննել ժամանակի ոգու տեսանկյունից», այլև ճանաչել բանահյուսությունը՝ իբրև ժողովրդի ոգու առանձնահատուկ արտահայտություն: «Ժողովրդի գենետիկ ոգին, նրա բնավորությունն ընդհանրապես, զարմանալի ու տարօրինակ բան է: Այն բացատրելի չի, ոչ էլ երբևէ կարող է ջնջվել երկրի երեսից. այն հին է, որքան ազգը, այնքան հին է, որքան այն հողը, որի վրա ապել են այդ մարդիկ»², – գրում էր Հերդերը:

Մի փոքր ավելի ուշ «ժողովրդի ձայն», «ժողովրդական երգեր» հասկացություններն ազգայնանում են, ձեռք բերում ազգային հասկացության իմաստ՝ իրենց մեջ ներառելով միջերն ու առասպելները, բանահյուսական պատառիկները, ծիսական ու վիպական երգերը, ժողովրդական հեքիաթները: Ի հակադրություն ֆրանսիական լուսավորչական ռացիոնալիզմի գաղափարախոսության՝ այս տեսության սոցիալ-պատմական հայեցությունը ազգային նկարագրի ինքնաճանաչման ու ոգու ֆենոմենոլոգիայի ներքին լիցքն ուղղում էր դեպի փառավոր ու իդեալական անցյալը՝ ժամանակի հեռուներում գտնելու ժողովրդի աշխարհայացքային հիմունքների և պատմության փիլիսոփայության առանձնահատկությունները, որոնք պայմանավորում են մարդկային ոգու ամենակարևոր ստեղծագործությունների՝ *կրոնի, փիլիսոփայության, պոեզիայի դեմքը*:

Բացառիկ հետաքրքրություն է առաջանում դեպի լեզուն ու ազգությունների դիցաբանական, առասպելա-պատմական անցյալը, որը նրանց համար ոչ թե պատմական իրականության, այլև բարձրագույն իդեալի, գաղափարախոսության արժեք է ստանում: Սեփական ակունքների քննությամբ պայմանավորված՝ քննության կենտրոն է բերվում մշակութային ողջ ժառանգությունը՝ շարժման մեջ դնելով ժողովրդի պատմությունը, վերագնահատելով ազգային ստեղծումների արժեքն ու համամարդկային նշանակությունը:

Անշուշտ, այս հանգամանքը քաղաքական դրդապատճառներ ևս ուներ՝ կապված Նապոլեոնի՝ Գերմանիա ներխուժման, ապա՝ ազգային պետականության, ազգային լեզվի ու մշակույթի կորստյան վտանգի հետ:

² Гердер И., Идеи к философии истории человечество, М., изд.-во «Наука», 1977, 705 с.

Հումանիտար գիտությունների մեջ ձևավորվում է դիցաբանական կամ միֆոլոգիական դպրոցը, որի պոետիկան կապվում է գերմանական ռոմանտիկների՝ Նովալիսի, Շելլինգի, Շլեգել եղբայրների ուսմունքի հետ, ովքեր առասպելաբանությունը համարում էին «բնական կրոն», նախամարդու գիտակցության հատուկ, նախապատմական վիճակ, որի անմիջական լեզուն պոեզիան է կամ երաժշտությունը: Գերմանացի հետազոտողներն այն համարում են «յուրաքանչյուր արվեստի համար անպայման պայման և նախասկզբնական անհրաժեշտություն», գաղափար, որը իբրև հայեցակարգ ամբողջանում է Յակոբ և Վիլհելմ Գրիմ եղբայրների աշխատություններում: Ըստ նրանց տեսության՝ ժողովրդական պոեզիան «աստվածային ծագում ունի»: առասպելից են էվոլյուցիայի ընթացքում առաջացել հեքիաթը, էպիկական երգերը, լեգենդներն ու բանահյուսական այլ կտորներ, որոնք «ժողովրդական հոգու» անգիտակից և անանձնական ստեղծագործությունն են:

Հումանիտար գիտությունների մեջ ձևավորված միֆոլոգիական դպրոցի տիպաբանությունը ոչ միայն ձևաբանում է խնդիրների լայն շրջանակ, որը կապված է դիցաբանության, միֆոլոգիայի, փիլիսոփայության, էթնոհոգեբանության, ազգագրության, անգամ՝ լեզվաբանության հետ, այլև հանձն է առնում հասարակական մտքի բանավեճը՝ ազգերի քաղաքակրթական հեռանկարի և պատմամշակութային ողջ արժեհամակարգի՝ պետություն, եկեղեցի, գիտություն, լուսավորություն, արվեստների խնդիրների նորացման վերաբերյալ:

Մայրենի լեզվի, կրոնի, ազգային ավանդույթների ու նյութական ու ոչ նյութական ստեղծումների պահպանության խնդիրը նույն տրամաբանությամբ ծանրացած էր դարեր շարունակ պետականություն չունեցող հայ ժողովրդի վրա, որովհետև, ինչպես գերմանացի ռոմանտիկներն էին պնդում, պատմական ժամանակը ազգի մեծությունը չափում էր նրա՝ քաղաքակրթությանը տված արժեքների մեծությամբ: «...Յեղը որքան հին է ու անարատ, այնքան ավելի են նրա մոտ պահպանված սովորույթները, և որքան շատ են սովորույթները, որքան զորեղ ու անկեղծ է դրանց հետ կապվածությունը, այնքան ավելի մեծ է ազգը»³, - գրում է Հերդերը: Գիտությունը փորձ է կատարում ճանաչելու միֆը,

³ Гердер И., Идеи к философии истории человечество, М., изд.-во «Наука», 1977, 705 с.

որը, հետզհետե անջատվելով իր՝ ավանդաբար ընդունված խորհրդանշական ու անվանողական նշանակությունից, ավելի ռացիոնալ, պատմական ու գեղագիտական ուղղվածություն է ստանում: Առասպելներն ու ավանդույթները սկսում են գրավել ոչ միայն իրենց բնականությամբ, հուզականությամբ, բանաստեղծականությամբ և ազգային ինքնատիպությամբ, այլև պատմական ու ազգային-քաղաքական բովանդակությամբ, ինչը և դառնում է նոր ձևավորվող դպրոցի տեսության հիմունքը:

«Գերմանական ռոմանտիկների սկսած շարժումը հայկական գրական շրջաններում ստացավ թե արտաքին, մակերեսային..., թե լուրջ գիտական, խորքային ու հիմնավորված արտահայտություններ: Նրանց սկսած գործի առաջին փուլը բանահավաքչական աշխատանքն էր, որ 19-րդ դարի կեսերից աշխուժանալով՝ լայն ծավալ ստացավ հետագա տասնամյակներում: Հայ պարբերականների հորդորը («Արշալույս Արարատյան», «Բազմավեպ», «Ազգասեր», «Մեղու Հայաստանի» և այլն)՝ հավաքել, մոռացության անդունդից հանել ժողովրդական բանահյուսության նմուշները, երբեմն ուղեկցվում էր բանահյուսական նյութերի արժևորմամբ»⁴, - գրում է գրականագետ-քննադատ Ժենյա Քալանթարյանը:

19-րդ դարի վերջին քառորդի արևմտահայ իրականության մեջ ազգային կյանքի շրջադարձային այս կետի վրա են հայ գրագետները հայտնաբերում երևելի ու վաստակաշատ հայկաբան-բանագետ Գարեգին Եպիսկոպոս Սրվանձտյանցի ազգային-լուսավորական գործունեությունը, որ իրենով նշանավորեց ազգային կյանքի նորոգության ու հեռանկարի մի ամբողջական պատմաշրջան: Թե՛ Արևմտյան Հայաստանում, թե՛ Արևելահայաստանում ծավալված պատմաքաղաքական և հասարակական իրադարձությունները, որոնք ուղղակիորեն առնչվում էին հայոց էքզիստենցիալ գոյաբանության խնդիրներին, սրել էին ազգի ինքնաճանաչման ու ինքնապահպանության անհրաժեշտությունը, արթնացրել հայկականության ոգին՝ նախադրյալներ ստեղծելով մշակույթի և գրականության զարգացման համար⁵:

⁴ Քալանթարյան Ժ., Հայ գրականագիտության պատմություն, Եր., ԵՊՀ հրատ., 1986, էջ 301:

⁵ Չանդադառնալով ազգային գաղափարաբանության ժամանակակից տեսություններին (օր.՝ perennialism-ին = մշտնջենական, մշտագո և հակաէսենցիալիստական = ազգի՝ իբրև սոցիալական ու քաղաքական նախադրյալներով արդիական կազմավոր-

Արդ, խորապես գիտակցելով պատմության շրջադարձային կետի ծանրությունը՝ վսեմական Խրիմյան Հայրիկը 1857-ին Պոլսից փոխադրվում է Արևմտյան Հայաստանի Վասպուրական գավառ, Վարագավանքում հիմնում «Ժառանգավորաց» վարժարանը, ապա սկսում տպագրել «Արծվի Վասպուրականի»-ն՝ իր հավատավոր ու ազգանպաստ գործունեությամբ ժողովրդի մեջ լուսավորություն տարածելու և ազգային կյանքը նորոգելու հեռանկարով: «Ժառանգավորաց»-ի առաջին շրջանավարտները, ուսումնատենչ ու ազգանվեր պատանիներ, որոնք Հայաստանի գավառներով մեկ եղան ուսուցիչ ու վարդապետ, բանաստեղծ ու բանահավաք, կոչված էին ժողովրդի ցավերին ցավակից, նրա անօգնական ու սարսափելի վիճակի դարմանողը լինելու: Նրանց մեջ առանձնանում էր ծնունդով վանեցի Սանդենց Օհանեսը, ով խանդավառված ոսկերեբան Եղիշե պատմիչի՝ Վարդանանց անօրինակ սխրագործությունների պատմությամբ, փոխում է մկրտության ավագանի իր անունն ու առնում անօրինակ ու քաջազն Գարեգին Սրվանձտյանցի անունը՝ Ազգն ու Հայրենիքն այլևս դարձնելով այն Նպատակը, որ գրավում է նրա ողջ էությունը, իմաստավորում գործունեությունը, իղձերն ու երազները: Հատկանշական է, որ տասնամյակներ շարունակ ազգային կյանքի նորոգության իմաստով անբեկանելիորեն շաղկապված է եղել այս երկու խնկարկելի հայերի՝ Խրիմյան Հայրիկի և Գարեգին Սրվանձտյանցի գործունեությանը⁶: 1862-ին, ստանձնելով Տարոնի հոգևոր առաջնորդի պաշտոնը՝ Հայրիկը Սրվանձտյանցին նշանակում է Մշո Սուրբ Կարապետի ժառանգավորաց վարժարանի տնօրեն-ուսուցիչ, 1863-ից՝ «Արծվիկ Տարոնո» թերթի խմբագիր՝ այլևս

ման տեսություն)՝ նկատենք, որ այս շրջանում «մշակութային ազգի (ազգայնականության)» հայեցակարգը, սրբագործելով տարածության ու ժամանակի մեջ մշտնջենական, արմատացած ցեղի ու էթնոգենետիկ հայրենիքի գաղափարը, նախնիների ավանդության ու մշակույթի բանավոր ու գրավոր տեքստերի տեսքով մտցնում է ազգային գիտակցության մեջ՝ գաղափարայնացնելով «քաղաքական ազգ» հասկացությունը:

⁶ Տես՝ **Կոստանդյան Է.**, Գարեգին Սրվանձտյանց (Կյանքը և գործունեությունը), Եր., «Մեսրոպ արք. Աշնյան» մատենաշար, 2008, 200 էջ, **Ղալանարյան Ա.** Հայ նոր գրականության պատմություն, Գարեգին Սրվանձտյանց, հ. 3, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1964, էջ 555–588, **Հարությունյան Ս.**, Գարեգին Սրվանձտյանցը և հայկական հերոսավեպը (Գ.Սրվանձտյանցի ծննդյան 150-ամյակի առթիվ), «Պատմաբանասիրական հանդես», 1990, № 4, էջ 3–9:

մեկընդմիշտ նրա հետ կիսելով ազգասիրական իր ծրագրերի և դրանց իրագործման ողջ ծանրությունը⁷:

Գրեթե ամբողջ կյանքի ընթացքում իբրև անխոնջ գործավոր ու նվիրակ, սրբազան հայրը ամենատարբեր գործառույթներով ու ծրագրերով պատվում է Արևմտյան Հայաստանում, շրջում քաղաքից քաղաք, գյուղից գյուղ, հասնում մինչև Թիֆլիս ու Էջմիածին, հանգրվանում Ռաֆֆու հայրենի Փայանջուկում՝ ի պաշտոնե ծավալած ազգային-լուսավորչական գործունեությանը զուգահեռ պատառ-պատառ հավաքելով ժողովրդի մեջ հետզհետե մոռացվող բանահյուսական չքնաղ կտորները, հեքիաթներն ու երգերը, գույքագրում խոնարհված ու խո-

⁷ Գարեգին Սրվանձտյանցի և Խրիմյան Հայրիկի կյանքի և ազգային-հասարակական գործունեության լավագույն գիտակ Էմմա Կոստանդյանը, որ բոլոր մանրամասների մեջ ներկայացնում է երկու խոշորագույն գործիչների կենսապատումն ամենայն մանրամասնությամբ, թռուցիկ անդրադարձ է կատարում Սրվանձտյանցի՝ 1866-ին լույս տեսած դասագրքին՝ այն դիտարկելով իբրև օրապահանջ իրողություն, նաև հավելում, թե. «Նոր ընթերցարանի» գտած ջերմ ընդունելությունն էր պատճառը, որ 1870 թ. Խրիմյանը պատվիրում է իր սանին. «Քանի մի դասագիրք պատրաստել պետք է և այն կուգեմ ձեր ձեռքով լինի և ձեր գրչով»: Խրիմյանի և Սրվանձտյանցի նամակագրությունից իմանում ենք, որ վերջինս զբաղվել է նաև «Հայ ժողովրդի պատմություն» դասագիրք շարադրելով» (**Կոստանդյան Է.**, էջ 47): Թե ինչպիսին պիտի լիներ այս դասագրքի շարադրանքը, ո՞րն էր Սրվանձտյանցի պատմահայեցության հիմունքը, ի՞նչ մեթոդներով նա պիտի նոր սերնդին ծանոթացներ հայոց գոյապայքարի դարավոր ընթացքին, առասպելներին, ավանդույթներին ու պատմական հերոսներին՝ կարելի է պատկերացնել միայն նրա գիտագեղարվեստական գործերն ուսումնասիրելով: Ցավոք, հավանաբար ժամանակի սղության պատճառով դասագիրքը չի գրվել կամ ավարտին չի հասցվել, մանավանդ որ Խրիմյանի հորդորներին՝ մանրամասն հաշվետվություն ներկայացնել գործի ընթացքի մասին, Սրվանձտյանցն այդպես էլ չի արձագանքել: Թերևս այս համատեքստում պիտի դիտարկել նաև Սրվանձտյանցի՝ հայրենասիրական մոտիվներով երկու դրամատիկական գործերի լոյսընծայումը:

Ինքը՝ Սրվանձտյանցը, իր գործունեության առաջին օրերից բացառիկ դեր էր վերապահում դասագրքերով մատաղ սերնդին իր ազգաբանությանն ու պատմությանը սովորեցնելուն՝ այն ներկայացնելով իբրև ազգափրկության ծրագիր: «Դասագրքեր շինելու է,- գրում է,- ընտանեկան կեանքի նկարագրութիւն ընելով, ազգային սեպհական սովորութիւնները գրելով, եկեղեցական տօները եւ ծեսերը... բերդերուն եւ ավերակներուն անունները, տեղերն ու ձեւերը ծանոթագնել մանկան: Ասօնք ոչ միայն գուարճալի եւ պիտանի կը լինին ուսանողին, այլ եւ **նոր ու մեծ յոյս կուտան մեր հայկական յեզուին, մեր ազգային հնագիտութեան ու պատմութեան**... Այնքան առարկաներ կան գրելու եւ սրբագրելու, այնքան թագուցեալ գանձեր կան հետաքրքրելու եւ ի յոյս հանելու, մեր յեզուին եւ պատմութեան ճոխութիւն տալու նիւթեր եւ ուղղելու շատ մը սխալներ, որոց մասին միայն առաջարկութիւն մը շինելու ծրագիրը ստուար հատորներ կը կազմէ» (**Գրոց ու բրոց**, Ա, էջ 23):

նարիվող վանքերն ու եկեղեցիները, Աստվածաշունչ մատյանները, վանքապատկան ձեռագրերը՝ իրար կապակցելու, վերականգնելու, ավերակներից դեպի կյանք կոչելու ընդհատված պատմության ու ազգային կենսագրության դրվագները՝ հայրենապանձ հերոսների անօրինակ, առասպելանման սխրագործություններով, հանուն Հայոց տան ու Քրիստոսի հավատքի պատմական հաղթանակներով, մտքի ու լույսի հանճարների փառապանձ վարքագրությամբ:

Հնարավոր և փաստացի դիտակետերի հարաբերակցությունը հայագետի առջև դրել էր նրբանուրբ ու խիստ կարևոր խնդիրներ՝ գտնել *համակարգը* և *լեզուն*, որի ներսում հնարավոր կլիներ կարգաբերել նշյալ հայեցակարգը՝ տարբեր դարերի նյութական ու ոչ նյութական ստեղծագործությունները դիտարկել մեկ ընդհանուր համակարգում, անվանել նարատիվները, որոնք մի եզրով սուզված են հնագույն արխայիզմի մեջ, մյուսով գրականության, մշակույթի մեջ արտացոլում են ազգային կյանքի ու գոյաբանության պատմությունը՝ որպես սոցիալականորեն և պատմականորեն ծածկագրված աշխարհի պատկեր ու պատկերացում:

Պատմական ժամանակի տրամաբանության մեջ այսօրինակ մշակույթը դրսևորվում ու կարևորվում էր ոչ միայն ճանաչողական-ուսուցողական, այլ նաև պաշտպանական գործառույթով:

Այստեղից է սկսվում Սրվանձտյանցի առնչությունը միֆոլոգիական դպրոցին: «Սա չի նշանակում իհարկե, թե բանահավաքչական ամեն աշխատանք և հայ բանագիտության զարգացման ամեն փաստ կարելի է և պետք է մեխանիկորեն հարմարեցնել դիցաբանական դպրոցի սխեմային և արհեստական սիստեմներ ստեղծել այնտեղ, որտեղ դրանք բացակայում են»⁸, – գրում է Ժենյա Քալանթարյանը:

Անշուշտ, միանշանակ չէ այս հեղինակի՝ որևէ գրական դպրոցի անխառն ազդեցությունը կրելը. բացառիկ և յուրահատուկ է նրա դերը 19-րդ դարի հայկական իրականության մեջ: Նրա գործունեությունը, ակադեմիական իմաստով, գեղագիտական կամ աշխարհայացքային որևէ նախասիրությամբ չէր թելադրվում, այլև պայմանավորված էր

⁸ **Քալանթարյան Ժ.**, Հայ գրականագիտության պատմություն, Եր., ԵՊՀ հրատ., 1986, էջ 303:

հայկական պատմության ու մշակույթի փշրանքների փրկության անհրաժեշտությամբ, հայ կյանքի կարիքներով:

Սրվանձտյանցը սովորական վիճակագիր չէր, ոչ անգամ բանահավաք. նա ուխտավոր է, ով փարված է իր բնաշխարհին, նա բանաստեղծ է, ով գրում է հայրենյաց մաքառման ու գոյության պատմությունը ու ջերմացնում է մաքրամաքուր անկեղծությամբ: «Ես գրականության այն շինականն եմ, – գրում է «Մանանա»-ի առաջաբանում, – որ ի վայրիս և ի մայրիս կը թարթափի, լեռնային, դաշտային տունկեր, ծաղիկներ և բույսեր կը ժողվե և կողովով կ' ածե զայն ի վաճառ ի հրապարակս քաղաքին, հորմե առյալ քաղաքացիք արվեստով կը վերատնկե զայն և կը դարմանե ի պարտեզս և ի բուրաստանս ապարանից մեծարանց: Իսկապես այս է իմ երկն՝ բանասիրաց և գրասիրաց համար պատրաստած նախնական նյութ»⁹:

Սրբազան վարդապետը, որ մի անգամ էլ ու բազմաթիվ անգամներ հող ու ջրին հանդիպած ժամանակ, հայացքը երկնքին հառելու փոխարեն, հողին էր խոնարհել ու աղոթել՝ «պաշտեմ քեզ, Հո՛ղ...», անօրինակ համոզմունքով է մշակույթի փիլիսոփայությունից արտածում պատմության փիլիսոփայությունը՝ ստեղծելով կոնցեպտներ, որոնց ներսում պարփակված, տեղավորված է մի զարմանալի աշխարհայտնություն, հայրենիքի մասին մի ամբողջական ու հիմնավոր գիտություն: Այդ գիտությունը բացառիկ նշանակությամբ իշխում է հայոց բոլոր ժամանակների վրա ու հստակ համակարգ է ձևավորում նրա գիտագրական բոլոր երկերում:

Այն իրար է կապում պատմամշակութային ու կենսափիլիսոփայական հասկացությունները՝ անդրադառնալու մեր ծագումնաբանության, բնկության և էթնիկական գենոտիպի խնդիրներին, ապա պատմությունը հասցնում մինչև ներկայի դժնի ժամանակները՝ ամեն ինչ տեղավորելով հայոց աշխարհակառույցի հիերարխիկ, բազմաստիճան կոմպոզիցիայում:

Ունենալով խոր ու համապարփակ գիտելիքներ հայոց հին (չաստվածների) դիցարանի, Աստվածաշնչի, քրիստոնեության, հայոց պատմության, բանահյուսության, հոգևոր բանաստեղծության ու ժո-

⁹ **Սրվանձտեանց Պ.**, Մանանայ, Կ. Պոլիս, տպագրութիւն Ե.Մ. Տնտեսեան, 1876 թիվ: Հղումներն՝ այս գրքից:

ղովրդական ասացումների վերաբերյալ, անբաժանելի կերպով իրար միացնելով նյութական ու հոգևոր աշխարհները՝ Սրվանձտյանցն ըստ էության ստեղծում է հայոց բնաշխարհի էպոսը՝ ծածկելով մշակութաբանական մի ահռելի դաշտ, հայոց պատմության մի ամբողջական բնագիր: Եվ ի պաշտպանություն ամենահին ու սքանչելի, բայց կործանվող ազգային կենսագրության՝ սկսում է վերականգնել ու գրի առնել նրա հիշողությունը:

Գարեգին վարդապետն ուներ մեծ ու հեռանկարային ծրագրեր. գրառել, ժամանակի փոշիներից մաքրել ու ժողովրդին վերադարձնել նրա ստեղծած բանահյուսական պատառիկները, նկարագրել վանքերն ու նրանցում պահվող ձեռագիր մատյանները, վերականգնել հայոց էպիկական անցյալի ու ներկայի ընդհատված կապը: Սրվանձտյանը խնդիր ուներ բոլոր մանրամասների մեջ ճանաչել տալու հայոց ինքնության պարագաները¹⁰, նրա ազնվագույն ոգու բացառիկ տրվածքը, որ հետագոտողը կապում է մի քանի նախադրյալների հետ: Հայերի դրախտային երկիրը, որ ձև է տվել այս ժողովրդի բնույթին ու բնավորությանը, նրա պատմությունը, որ օրինակ է դժնդակ անկումների ու բացառիկ մեծագործության, հայոց բարոյական առաքինությունն ու ապաշխարիկ աստվածապաշտությունը կարիք ունեին ճանաչումի ու վերընթերցման:

«Մեր երկրի հողն ու ջուրը, օդն ու եթերքը օծուած են հրեղէն լեզուով, հրեղեն հոգւով, որք ոչ միայն վերաստեղծեր են զհայեր, այլ եւ վերապատմեր են հետագայից Հայաստանի նահապետաց, դիւցազնաց, թագաւորաց եւ առաքնեաց անուններ ու գործերը: Այս լեռները, հովիտները, ձորերը, շէները... ամենքն ալ խորհրդաւոր անուն մը ունեցած են. եւ այդ ամէն մէկ անուն կը պարունակէ իւր մէջ անձի մը կամ անցքի մը պատմութիւն, թէ առասպել համարուի այն առ այժմ ու թէ իրական, եւ այսպիսեաց շարունակութիւնը մագաղաթներէն աւելի տոկուն եւ անջինջ մատեան մը շարունակած է. այն է՝ բնակչաց բերանացի աւանդութիւնք կամ վէպք եւ զրոյցք: Ասոնց մէկ նշմարն է իմ ըն-

¹⁰ «Դրանցով էր, որ Սրվանձտյանցը բացեց մեր բազմադարյան բանարվեստի, ժողովրդական կյանքի, հայոց բնաշխարհի մինչ այդ փակ գաղտնաբանների դռները և առագին անգամ համ ու հոտով ծանոթացրեց այնտեղ եղած մեծագույն արժեքներին», – գրում է Ղանալարյանը (**Սրվանձտյանց Գ.**, Երկեր, էջ 12)՝ ուղիղ իմաստով հղում անելով միֆոլոգիական դպրոցի առաջադրություն:

ծայս»,– գրում է Սրվանձտյանցն իր անդրանիկ գրքի՝ «Գրոց ու բրոց»-ի¹¹ առաջաբանում, որը լույս է տեսնում 1874 թվականին Պոլսում: Այն բացառիկ ընդունելություն է գտնում հայ իրականության մեջ՝ հեղինակի անունը մեկընդմիջտ կապելով հայ ազգագրության ու բանահավաքչության պատմությանն ու ազգային էպոսի առաջին գրառմանը: «Գրոց ու բրոց» ժողովածուն կազմված է երկու հիմնական մասերից. առաջին մասի մեջ բանաստեղծական գունավորում են ստացել Տարոնն ու Վասպուրական աշխարհը՝ տեղագրական, ազգագրական նկարագրություններով, տեղավայրի բանահյուսական փոքրիկ, բայց արժեքավոր կտորների տիպաբանական առանձնահատկություններով, երկրորդ մասում զետեղված է հայ ժողովրդի ազգային մեծ վեպի առաջին պատումը՝ Մշո բարբառով, «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով:

«Հայ մշակույթի դարավոր պատմության մեջ կատարված մեծագույն հայտնագործություններից մեկն էր դա, որի համար մենք պարտական ենք Սրվանձտյանցի տարիների ուշադիր հետամտումներին ու անձանձիր ջանքերին»¹²,– գրում է ակադեմիկոս Ղանալանյանը՝ ներկայացնելով, թե մեծարդյուն այս գյուտն ինչպիսի հեղաշրջություն է կատարել հայ բանագիտության ու բանահավաքչության, ապա հայոց ազգաբանության մեջ: «Մեր ոգու դեռևս չգիտակցված քարտեզը, որի մեջ պահպանվում են մեր բոլոր «գաղտնագրերը»¹³,– էպոսի ազգաբանական ու մշակութաբանական բնութագիրն այսպես է տալիս Հենրիկ Էդոյանը:

Հայկական էպոսում ամփոփված է առաջին հայացքից պարզ, բնական, հասկանալի մի աշխարհ, ուր սակայն, տոհմային կամ սերնդային արյունակցությամբ կապակցված գործողություններից անդին գաղտնագրված է խստորեն կառուցված մի համակարգ, որի մեջ, ինչպես ոսպնյակում, հստակ երևում է հայկական աշխարհի ճշգրիտ կառուցվածքը՝ ժողովրդի կյանքն ու կենցաղավարությունը, բարոյական ու կրոնական ըմբռնումների ամբողջականությունը, ծեսերն ու ավան-

¹¹ **Սրվանձտյանց Գ.**, Գրոց ու բրոց եւ Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, Կ.Պոլիս, տպագրութիւն Ե.Մ. Տնտեսեան, 1874 թիվ: Հղումներն՝ այս գրքից:

¹² **Սրվանձտյանց Գ.**, Երկեր, հ. 1, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, առաջաբան, էջ 12:

¹³ **Էդոյան Հ.**, Շարժում դեպի հավասարակշռություն, Եր., «Սարգիս Խաչենց-Փրիթինֆո» հրատ., 2009, էջ 340:

դույթները, իրար միահյուսված հնագույն առասպելներն ու ավանդական վիպական սյուժեները, սրբազան տարածքներն ու հավատքի տաճարները, աշխարհագրական ու բնական միջավայրը, պատմության ու մարդու հարաբերությունը, մեծ իմաստով՝ հայրենաճանաչության մետաֆիզիկան:

«Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» ստեղծագործության հրատարակությունից հետո՝ անցած 150 տարիների ընթացքում, հայ գրականագիտական միտքը ստեղծել է էպոսագիտության մի ահռելի պատմություն, որը հայկական դիցազներգությունը քննության է առել ամենատարբեր հայեցակետերից՝ էպոսի բանագիտական, մշակութաբանական, պատմահամեմատական ուսումնասիրություն, էպոսի ստեղծման, տարածման միջավայրի, կերպարային համակարգի քննություն, էպոսի և բանահյուսության կապը, փոխազդեցությունների և փոխներթափանցման քննություն, Գարեգին Սրվանձտյանցի և այլ վիպահավաքների գրառած բնագրերի ուսումնասիրություն և այլն: Սակայն հայկական դիցազներգության առաջին տեսաբանը Սրվանձտյանցն է ըստ էության, և, ընդունված է ասել, որ նա է գրառված վիպերգության առաջաբանում հիմքը դրել էպոսի քննական տեսության: «Սրվանձտյանցը մի քանի դիտողություններ է անում իր գրառած պատումի վերաբերյալ, որոնք ունեցան ելակետային արժեք հետագայում մեր վեպի ուսումնասիրման համար»¹⁴,– անդրադառնալով «Սասունցի Դավթին»,– գրում է Սարգիս Հարությունյանը:

Բանաստեղծ-բանահավաքը մի քանի թռուցիկ դիտարկումով բնութագրում է վեպը՝ նախ խոսելով պատումի լեզվի վերաբերյալ¹⁵, ա-

¹⁴ **Հարությունյան Ս.**, Գարեգին Սրվանձտյանցը և հայկական հերոսավեպը (Գ. Սրվանձտյանցի ծննդյան 150-ամյակի առթիվ), «Պատմաբանասիրական հանդես», Եր., 1990, № 4, էջ 3–9:

¹⁵ «Պատմիչի լեզուին մեջ բաղիշեցւոց բառեր կան գործածուած: Պատճառն այն է, որ պատմիչի գեղը թեպէտ Մշոյ կը պատկանի, բայց Բաղիշոյ մօտակայ է. ընդհանրապէս Խոյրթայ եւ Չուխուրայ գեղերու հայոց լեզուն այս տիպն ունի»,– գրում է Սրվանձտյանցը (**Պրոց ու բրոց**, էջ 127), ակնարկելով, որ վիպերգության լեզուն հիմնականում Մշո բարբառն է, մասամբ խառնված Բաղեշի բարբառային տարրերով: Սա բացատրվում ոչ միայն առնիստցի Կրպոյի՝ նաև Բաղեշի բարբառին տիրապետելու իրողությամբ, այլև գրառած նյութի՝ ազգագրական-տարածքային որոշակի խմբի պատկանելու հանգամանքով: Հետաքրքիր է նկատել, որ եթե ազգագրական-բանահյուսական մյուս նյութերի գրառման ժամանակ բանահավաք-ազգագրագետը գրական մշակման է ենթարկել դրանք, այս պարագայում էպոսը գրքում

պա ներկայացնում է գրառված տեքստի՝ առավել ընդարձակ, երգային տարբերակով գոյություն ունենալու հանգամանքը¹⁶, բնագրի ժանրային պատկանելությունը, վիպասացման գործընթացը: Խոսում է նաև ստեղծագործության համադրականության մասին՝ ցուցանելով իրար միախառնված բանահյուսական տարբեր ժանրեր՝ առասպել, ավանդություն, երգ, անեծք ու օրհնություն և այլն, որոնք կապվում են մի շարք ընդհանրություններով¹⁷:

Բացառիկ խորաթափանցությամբ ձևաբանված այդ դրույթներով փոխվում է հայ էպիկական բանահյուսության ուսումնասիրության՝ Սրվանձտյանցից փոքր-ինչ վաղ սկսված ընթացքը, ժխտվում է տեսակետը, թե հայերը էպոս կամ դյուցազնավեպ չեն ունեցել, հնարավորություն է առաջանում «Սասնա ծռեր» էպոսի էջերում քննել հայ մատենագիտության միջոցով ավանդված առասպելա-էպիկական պատառիկները: Անդրադառնալով էպոսի հիմքում ընկած առասպելական ու պատմական ահռելի նյութին՝ հստակ համոզմունքով պնդում է, որ «պատմածին նիւթը Արծրունեաց նախարարութիւն եւ Սասնո գաւառի շինութիւն ու սկզբնաւորութիւնն է: Աստուածաշունչէն եւ մեր ազգի պատմութենէն յայտնի է, որ Ասորոց Սենեքերիմ արքան իւր Ադրամէլէք եւ Սանասար որդիքը կոտքին զոհ պիտի մատուցանէր: Ասոնք ալ իրենց հայրը զոհեցին եւ փախստեայ եկան ի Հայս մեր Սկայորդոյ ժամանակը»¹⁸: Ապա հավելում է իրողություններ՝ կապված աշխարհագրական տեղա-

գետնել է Մշո բարբառով, անշուշտ, գաղափարական ու գեղագիտական հստակ հանձնառությամբ:

¹⁶ «Մինչեւ ցատտ ինչ որ գրեցի, անոնց եւ ոչ ստուերագիրն ունէի, այլ որքան միտքս առաջնորդեց, յիշեցի եւ գրեցի: Այժմ, իբրեւ բուն նիւթ այս գրքոյկիս, պիտի կցորդեմ Դաւիթ Սասունցի կամ Մհերի դուռ վէպը, զոր երեք տարի հետամուտ եղայ ձեռք բերելու եւ ոչ ոք գտայ, որ ամբողջապէս գիտենար, մինչեւ 1873 յունիս ամսոյն Մշոյ դաշտի Առնիստ գեղի երեսփոխան պ. Կրպօն ներկայացաւ ինձ արժ. Օհան վարդապետի միջոցաւ: Սա կը պատմէր, թէ իւր վարպետը շատ ընդարձակն գիտէր այս պատմութեան, եւ թէ մէջ ընդ մէջ շատ տեղեր ոտանաւոր խաղեր կային, որ ձայնով կ'երգէր: Թէ՛ այդ վարպետը երկու վռշիկ աշակերտ ունէր, որոնք շատ կատարեալ սորված էին, եւ թէ ինքն՝ բաւական ժամանակ պատմած ջիւնելով, շատ կտորները մոռացած էր: Այսուամենայնիւ, երեք օր զինքը պահեցի, խնդրեցի, պատուեցի, պարգևատրեցի, եւ նա ինքզինքը կազդուրելով, պատրաստելով, պատմեց բերանացի, զոր իրեն բարբառով ի գիր անցուցի» (**Գրոց ու բրոց**, էջ 127),– գրում է Սրվանձտյանցը:

¹⁷ Տես Հայկ Համբարձումյան, Գարեգին Սրվանձտյանցը և էպոսը, <https://www.art365.am>.

¹⁸ **Գրոց ու բրոց**, էջ 128:

վայրերի կենդանի զգացողության, ազգագրության, ազգային ծես ու ավանդույթների, ժամանակային պարբերությունների, անվերջ վերադարձի՝ ժողովրդի ամենավաղնջական պատկերացումների հետ: «Այս գուածքի մէջ,- գրում է Սրվանձտյանցը,- կը տեսնէ հետաքրքիրն՝ գեղջկական կեանքի հանգամանքները. Աբրամէլէքի մահուան համար սասունցւոց սուգը, Քեռի Թորոսի ուխտը, «Հաց ու գինի, Տէրն կենդանի» երդումն, հպատակեցընելու համար թուրի տակէն անըցնելու սովորութիւնը... Խանդուղ խանըմին աշուղ դրկելը՝ Դաւիթը իրեն վրայ սիրեցընելու, Դաւիթի անվեհերութիւն եւ վեհանձնութիւնը, երբ Մսրամէլէքի հետ կը զարնուին, Խանդուղի քաջութիւնը եւ փէհլիվաններուն ճիւղական նկարագրի ահագնութիւնը»¹⁹՝ հավելելով բազմաթիվ այլ իրողություններ, որոնք բնութագրական են էպոսի համար և ուղղակիորեն հղվում են միֆոլոգիական դպրոցի տեսությանը²⁰:

Օրինակ՝ որպէս պատմական անձանց ու ժամանակային անցքերի անախրոնիզմներ է ներկայացնում սյուժեի բազմաթիվ դրվագներ՝ բացառիկ իմաստությամբ տարածական և ժամանակային քրոնոտոպների միահյուսումը կամ դրանց ծածկագրման ու շղթայակցման հնարավորությունը հղելով ազգային գոյաբանության ու *ոգու ընդհանրական պատմության* կամ տեքստի ստեղծմանը: Սրվանձտյանցն այնուհետև ուշադրություն է դարձնում վիպական անձնանուններին ու տեղանուններին՝ դրանց մի մասը ստուգաբանելով ու նույնական համարելով իրական ու պատմական տեղանուններին, մյուսը հղելով միֆոլոգիայի ու դիցաբանության ոլորտ: Այսպէս, կապված էպոսի վերնագրում արծարծված Միերի դուռ կամ Ագռավաքար տեղավայրի հետ՝ Սրվանձտյանցը հնախոսական տվյալներ է հայտնում՝ Միերի կերպարի մէջ տես-

¹⁹ Նույն տեղում:

²⁰ «Սասնա ծռեր»-ը Սասնա դյուցազնական տոհմի չորս սերունդների ծննդից մինչև մահ կատարած արարքների վիպական պատմությունն է, որն սկսվում է այդ տոհմի ծագումից և Սասնա տան հիմնադրումից և ավարտվում տոհմի վերջին ներկայացուցչի՝ անմահ ու անժառանգ Փոքր Միերի ժայռում փակվելով: Այն մի փակ, ամբողջական ու ավարտուն համակարգ է, բաղկացած ժամանակային մի քանի ցիկլերից, թեմաներից, սյուժեներից, դրանցում միավորված բազմաթիվ ու բազմազան մոտիվներից»,– գրում է բանագետ Ս. Հարությունյանը (*Հարությունյան Ս., Բանագիտական ակնարկներ*, Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 151):

նելով Միիր կամ Միթրա աստվածության արտացոլանքը²¹: Առհասարակ, այսօրինակ դրվագները շատ են Սրվանձտյանցի գործերում:

Միերի պատմությանը կրկին հանդիպում ենք «Գրոց ու բրոցի» առաջին էջերում, որտեղ Վան-Վասպուրական աշխարհին է՝ Հայկի, գոռոզ, նանրամիտ Բելի ու Նրա՝ քար դարձած ուղտապանների առասպելությամբ, բազմաստվածության դիցարանով ու չաստվածների պաշտամունքային ծեսերով, օձերի ու վիշապների, չար ոգիների ու պահապան հրեշտակների մասին ասացումներով, չքնադագեղ Աստղիկ աստվածուհու լեգենդով, ապա Արայի, տարփանքից խելակորույս Շամիրամի ու հարալեզների, Նեմրուփի ու Գրգուռի, Միերի դռան, Սուրբ թռչնի ու վիշապ-օձերի, Ծիծեռնասանդի, Կաղ Դևի, Մշո ու մշուշի, Լուսնի ու Արևի, Թուփ Մանուկների մասին և բազմաթիվ այլ հիասքանչ պատումներով: Ապա հաջորդում են Տարոնի ու Վասպուրական աշխարհի ժողովրդական սովորույթների, բառ ու բանի, հարսանիքի ու Համբարձման տոնի, Վարդավառի տոնախմբության ու բարեկենդանի նկարագրությունները, գրառված աշխատանքային ու հարսանեկան երգերը, չքնադագեղ ու խորախորհուրդ հեքիաթները, որոնց առկայությունը չսպառվող ժամանակի գիտակցումն է՝ սիմվոլացված «անվերջ վերադարձի» առասպելով, հնագույն աշխարհակարգի ծիսային խորհրդանիշների՝ պատմական, ազգային բովանդակությամբ վերաիմաստավորումով²²:

²¹ Նախքան այս եզրակացությանը հանգելը նա Միերի մասին պատմում է մի առասպել, որ վիպասանության մեջ արտացոլված չէ: «Միերն դռան վերեն սև ջուր մը կաթ կաթ կծորի: Եւ կրսեն. «Միերն և յուր ձին աստուծո հրամանով փակվեր են այն տեղը: Այն սև ջուրը Միերի ձիու շեռն է: Այդ դռնով ներսը ճախրի ֆայակ կդառնա, այսինքն աշխարհի մարդկանց կամ կամ երկրագնդին ճախրը, անիվը, Միեր շարունակ անոր վրա կնայի, երբ այդ ճախրը դադարի, այն օր Միեր կադարտի, դուրս կելլե ու աշխարհը կավրե», և թե՛ «Ամեն տարի Համբարձման գիշերը երկինք գետին իրար կհամբուրեն. և այդ թուպեն Միերի դուռը կբացվի, ով որ արթուն մնացեր է այդ վայրկյանը տեսեր, ինչ որ սիրտն ուզեր, այդպես եղեր է: Եվ որովհետև Միերի դուռ բաց է այդ թուպեն, ով որ ներս մտնե, որքան ոսկի ուզե կառնե, դուրս կելլե, վասնզի հոն աշխարհի ոսկին կուտված է: Թե՛ քանի մը մարդիկ փորձեր են և ագահ լինելով շատ վերցնելու համար՝ հուշացեր, դուռը գոցվեր, ներսը մնացեր են» (Նույն տեղում, էջ 143),– գրում է բանաստեղծ-հոգևորականը՝ վերադառնալով միհրականության պատմությանը:

²² Ա. Բեքմեզյանը վերոնշյալ գրքում (**Գրականության տեսության արդի խնդիրներ**, էջ 97) գրում է, թե միֆոլոգիական մտածողության մեջ չկա պատկերացում ճշմարտության և ստի, հակադրությունների, ժամանակի ու տարածության ստույգ

Այսպես է նաև մյուս երկերի պարագայում, որոնցից ամեն մեկը առանձին ու անկախ ամբողջություն լինելով հանդերձ, մյուսներին հարում է և միավորվում հայկական աշխարհակառույցի ընդհանրության, «մշակութային ազգի»-ից «քաղաքական ազգի» վերաճնվելու, պատմության օբյեկտ մնալու կոնցեպտներով: Երկրի, նրա նյութական ու ոչ նյութական մշակույթի ճանաչողությունը դառնում է ուղիղ ծրագիր, որը Սրվանձտյանցի պարագայում դուրս էր ժամանակի գիտափիլիսոփայական տեսությունների ուղիղ ազդեցությունից:

1874 թվականին՝ «Գրոց ու բրոց»-ից անմիջապես հետո Սրվանձտյանցը հրատարակում է իր երկրորդ ժողովածուն՝ «Հնոց և նորոց»-ը, որ հիմնավորապես կազմված էր գրավոր աղբյուրներից և աղբյուրագիտական բացառիկ նշանակություն ունեւ՝ ուղիղ իմաստով կապված լինելով հայոց պատմությանը, առանձին հղումով՝ հայ մատենագրության պատմությանը: Գարեգին Սրվանձտյանցի գրական ժառանգության մեջ նյութերի առատության, հարցադրումների բազմազանության և ազգային կյանքի մեկնաբանության առումով ուշագրավ է «Մանանա» ժողովածուն՝ տպագրված 1876 թվականին դարձյալ Պոլսում:

Գիրքը բաղկացած է մի քանի մասից՝ «Հայրենեաց համն ու հոտը»՝ առավելապես նյութ վերցրած XIX դարակեսի Վանի Այգեստանի միջավայրից: Այստեղ էթնոգենետիկ իմաստով տեղայնացված պատկերներ են՝ առնված Վանա խոհանոցից մինչև վանեցիների ծիսական արարողություններ, հավատալիքներ ու ծեսեր, հավաքագրված են

չափումների մասին, ինչը պարտադիր պայման է պատմության, պատումի համար: Ապա վկայակոչում է ռուս գրականագետ, մշակութաբան Ռուդնևին (**Руднев В.,** Словарь культуры 20-го века <http://www.lib.ru/CULTURE/RUDNEW/slowar.txt>), ով խոսում է ժամանակային պարբերությունների (ցիկլերի), միֆ-առասպել-արքետիպ-պատմություն պարադիգմայի մասին, որ ընկած է միֆապոետիկայի հիմքում: «Խնդիրն այն է,– նշում է գիտնականը,– որ միֆական գիտակցության մեջ տարածությունը և ժամանակն այլ են, դրանք ցիկլային են: Մարդկության ամենահիմնական միֆերից մեկը հավերժական վերադարձի միֆն է: Իսկ միֆական տարածությունը ագրարային ծեսի տարածությունն է (пространство аграрного ритуала), որտեղ ամեն ինչ փոխկապակցված է: Յուրաքանչյուր երևույթ, այդ թվում և բնության հետ կապված, մեկնաբանվում է տարածաժամանակային եզրութաբանությամբ՝ կապված ցանքի, հասունացման և հունձքի հետ: Երբ առաջանում է պատմական գիտակցությունը՝ ապագայի մասին պատկերացումը, որը չի կրկնում անցյալը, միֆը սկսում է կոտրվել, դեմիֆոլոգիզացվել: Այստեղից էլ առաջանում է միֆի մասին այնպիսի պատկերացում, ինչպիսին է պատմությունը «Հին հունական լեգենդների և առասպելների» ոգով» (**Руднев В.,** նույն տեղում):

բազմաթիվ ավանդություններ, երգեր ու ասացումներ: «Հայրենեաց վեպը և զրոյցը» բաժնում տեղավորված են հեքիաթներն ու առակները, «Երգք և նվագք հայրենեաց»-ում տեղ են գտել ձեռագրերից քաղված միջնադարյան բանաստեղծության մի քանի սքանչելի պատառիկներ, ապա աշխարհիկ ժողովրդական երգեր, հանելուկներ, դյութանք, բժշկարան և այլն:

Այդ գրքերում ասես ներծուված է ամբողջ ազգի ինքնաստեղծման տառապանքը՝ որպես տիեզերական կամքի ինքնագիտակցում: Այստեղ ամբողջ հայոց պատմությունն է՝ իր ֆիզիկական ու հոգևոր հանճարով, իր պարտություններով ու հաղթանակներով, ազգային բանականության իր մաքառմամբ՝ վերածնելու իր ոգին, պատմական իր առաքելությամբ:

Ու բնավ պատահական չէ, որ Սրվանձտյանցի ստեղծած Գրի տարածությունը դառնում է Հայրենիքի մանրակերտը, և հայրենիքը վկայագրող նրա տեքստի ներսում միֆական ու պատմական տարրերի, ներքին քրոնոտոպիկ և մշակութային նշանակի միավորների համատեղելի հարաբերությունը ստեղծում է այն պարադիգմը, որ գիտակցության մեջ ակտիվացնում է հայոց աշխարհակառույցի բոլոր պարունակները՝ ծննդաբանության, բնիկության, էթնոգենետիկ տարածքի վկայումները, չափազանց պատկերավոր մտածողությամբ ներկայացնում է ազգային գոյաբանության ֆենոմենոլոգիան և իբրև ներդիր պատումներ՝ տեքստ է ներմուծում հայոց կենսագրության դրվագներով սրբազնացած բազմաթիվ պատմություններ, երևելի մարդկանց դիմանկարներ, ձեռագրերի, վանքերի ու եկեղեցիների նկարագրություններ, պատմական ամբողջական վավերագրեր:

1877–78-թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանի հատուկ կոնդակով Սրվանձտյանցն ու երկու վարդապետ՝ Վահան Տեր-Ստեփանյան (Պարտիզակցի) և Արիստակես Տեր-Սարգսյան (Տևկանց), սահմանված առաքելությամբ գործուղվեցին արևմտահայ գավառները՝ հայ բնակչության դժգոհության առիթները, կարիքները, ժողովրդագրական վիճակագրությունը տեղեկագրելու և Կ. Պոլսի Ազգային ժողովին ու վարչության անդամներին ներկայացնելու նպատակով: Դժնդակ ու ողբերգական տարիներ էին արևմտահայոց համար՝ պատերազմից ավերակ-

ված երկիր, սով, գաղթ, մահ, մահ... Իրականության մեջ միֆական այլևս ոչինչ չկար...

1878-ի ապրիլի 30-ից սկսած՝ հետագա երկու տարիներին Գ. Սրվանձտյանցը լինում է հայաբնակ բազմաթիվ վայրերում՝ Տիգրանակերտ, Սեբաստիա, Մարզվան, Ամասիա, Թոքատ, Պաֆրա, Սինոպ, Տիվրիկ, Ակն, Կամախ, Երզնկա, Դերջան, Կարին, Արաբկիր, Բաղեշ, Վան, Մուշ: Իր տպավորությունների ու խորհրդածությունների արդյունքում ընթերցողի սեղանին է դնում «Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ»²³ խորհրդավոր վերնագրով գիրքը, որի առաջին հատորը լույս է տեսնում 1879 թվականին, երկրորդը՝ 1884-ին:

Այս գրքում, որի ժամանակային ու տարածական տոպոսն արդեն կայուն շրջագծեր, հստակ ճանաչելի սահմաններ ունեն, հայոց բնաշխարհը երևում է ամենաբարդ ու ճակատագրական շրջանում, իր ինքնության փշրանքները ազգային-քաղաքական ծանրագույն ժամանակի մեջ սպառվելով: Սրվանձտյանցը գրի է առնում այդ ժամանակը՝ միանգամայն այլ տրամադրությամբ ու նպատակադրումով: «Եթե նկատեն ոմանք պակաս բաներ գրուածքիս մէջ,– Ա գրքի առաջաբանում գրում է Սրվանձտյանց վարդապետը,– կատարելապէս իրաւունք ունին իրենց կողմանէ լրացընելու դիտողութիւններ գրել, բայց միշտ անկողմնակալ հոգով, ինչպէս մեք ալ նոյն զգուշութիւն ըրած ենք, վասն զի ամէն ոք կրնայ համոզուիլ, թե գրածներուս նպատակը ազգայնոց յառաջադիմութիւն եւ իրենց օգտակարութիւնը ցոյց տալ է միայն: Հայը Հայուն ծանօթացնել, Հայը Հայուն սիրել տալ է բոլորովին իմ փափաքս եւ ջանքս»²⁴: Հենց այս կենտրոնի շուրջ է հավաքվում «Թորոս Աղբարի» բնագիրը:

Գիրքը ուղեգրական պատառիկների, վերհուշերի, նոթերի ու հիշողությունների մի հետաքրքիր համահավաք է՝ տեղ-տեղ լուսավորված հեղինակի ստեղծագործ հոգու բացառիկ չքնաղ գույներով, տեղ-տեղ ծանրընթաց ու գետնամած՝ ցավի ու ողբերգության արկումներով: Թե ինչ էր այս վիթխարի գրքի արժեքը²⁵, դժվար է ամփոփել մեկ հոդվա-

²³ **Սրվանձտեանց Գ.**, Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ, մասն Ա, Բ, Կ. Պոլիս, տպագրութիւն Ե.Մ. Տնտեսեան, 1879, 1884: Այսուհետև հղումները կտրվեն այս գրքից:

²⁴ **Սրվանձտեանց Գ.**, Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ, մասն Ա, էջ 5:

²⁵ Միայն «Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ» երկհատոր աշխատասիրության մեջ Սրվանձտյանցը հրապարակում է ձեռագրացանկեր ու հիշատակարաններ, ընդհանուր առմամբ 549 միավոր՝ Օսմանյան կայսրությունում Համիդյան ջարդերից

ծում: Բայց գրքի իմաստաբանական կենտրոնը, գաղտնագիրը Առաջաբանի մեջ է, որը ներկայացնում ենք առանց կրճատման.

«Դեռ ցամաքը չելած, հաւք մը կը տեսնեմ, սետորակ փետուրով, բարակ վզիկով, գլորիկ գլխով, զոր ծռած էր մէկ քով, թխորակ աչերով, սպիտակ լանջով, ծնկները ծալած ջրոյն ալեաց վրայ կ'երերայ, սգաւորի մը անգին կորուստ ունեցողի կը նմանի...անփոյթ հայեացք մը կը ձգէ աչքի ծայրով դէպ 'ի մեզ երբեմն: Մինակ միայնակ է ինք բոլորովին: Յանկարծ ծովուն յատակը կ'իջնէ, կ'անհետանայ, խորերը կը յուզէ, եւ ահա ջրոյն երեսը կ'ելնէ պարապ եւ ունայն, մի եւ նոյն տխուր տիպով ու դիրքով...:

– Ի՞նչ կ'որոնես, խեղճ հաւուկ:

– Ի՞նչ է աս թռչնոյն անունը,– հարցուցի ծավացի ընկերներէս: Պատասխանեցին.

– ԹՈՐՈՍ ԱՂԲԱՐ է իւր անուն:

Թորո՛ս աղբար, առ նոր զարկ մը սրտիս...Արդեօք որոյ անձնաւորութիւնն էր ան:

Այ Թորոս աղբար, որ կը յուզես ծովուս խորերը, կը յուզես սրտիս անդունդները: Թորոս աղբար, որ մէկ կորուստներդ կը խնդրես, արդեօք տաճարին եթէ դահլիճին, Լեւոնեանց եթէ Ներսիսեանց...Էյ Թորոս աղբար, թո՛իր ինձ հետ, թո՛իր զքեզ տանեմ հայրենիքէն հեռացեալ Հայոց 'ի տես, 'ի յոյզ եւ 'ի յոյս...Բայց դու կը մերժես, չես համոզուիր, եւ ոչ տեղէդ կը բաժնուիս:

Այո, դու ուղիղ ես, յուզէ, խնդրէ, որոնէ այդ տեղ. ԿՈՐՈՒՍԸ՝ ԿՈՐՍՈՒԱԾ ՏԵՂԸ...»²⁶:

Ձևի ու բովանդակության ինչպիսի՛ կատարելություն, ինչպիսի՛ չքնաղ ու իմաստավոր ինքնագիտակցություն, որ հեղինակը լուծում է մի չափազանց խոսուն նախադասությամբ. «Հայ եղողը՝ Հայաստանի հողոյն վրայ ինքզինքը կը ճանաչէ, ինքզինքը վեհ և կենդանի կը գտնէ, փորձեցէք և տեսէք»²⁷:

ու Ցեղասպանության հետևանքով կորսված 9000 միավորից: Գրքի առջին մասում, ըստ գտնվելու վայրի, ցուցակագրված է 134 ձեռագիր, երկրորդ մասում՝ 415 ձեռագիր: Ծարադրանքի մաս են կազմում եկեղեցիների, վանքերի, դպրոցների ու պատմամշակութային հուշարձանների մնրամասն, փաստագրված նկարագրությունն ու պատմությունը:

²⁶ Նույն տեղում:

²⁷ **Սրուանձտեանց Գ.**, Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ, 1879, ԺԴ:

Եզրակացություններ

Ձևավորվելով 19-րդ դարակեսին՝ միֆոլոգիական դպրոցը շուտով տարածվեց եվրոպական մայրցամաքում և բազմաթիվ հետևորդներ ունեցավ տարբեր երկրներում: Հայ գիտա-գեղարվեստական միտքը չէր կարող անմասն մնալ համաեվրոպական փիլիսոփայական ու մշակութաբանական այս շարժումից:

Երկար դարեր պետություն չունենալով և կրելով ճակատագրի չարաղետ հարվածները՝ XIX դարակեսի բարդագույն ժամանակներում հայոց ազգային ինքնության գիտակցումն ուղղված էր գոյաբանական կառույցում մշտականի, հավերժականի, էթնիկական նշանների ու նշանակների կայուն տեքստի որոնմանը, որը նույնական էր հայրենիքի ինքնաճանաչման, ինքնաստեղծումի գաղափարին, «մշակութային ազգ» ու «քաղաքական ազգ» կոնցեպտներին: Այս շրջանում է կարևորվում ազգային ու հասարակական գործիչ, բանահավաք-ազգագրագետ Գարեգին Սրվանձտյանցի գործունեությունը:

Հայկական գավառներում ազգանպաստ առաքելության ընթացքում բանահավաք-հոգևորականի հավաքած բանահյուսական-ազգագրական ահռելի նյութը, որ 1874–1884 թվականներին հրատարակվում է մի քանի հատորներով, որոշ իմաստով առնչվում է դիցաբանական դպրոցի տեսությանը:

Իրար կապակցելով պատմամշակութային ու կենսափիլիսոփայական հասկացությունները՝ մեծ ազգագրագետ-հայկաբան ըստ էության հանձն է առնում հասարակական մտքի բանավեճը՝ ազգերի քաղաքակրթական հեռանկարի և պատմամշակութային ողջ արժեհամակարգի՝ պետություն, եկեղեցի, գիտություն, լուսավորություն, արվեստների խնդիրների նորացման վերաբերյալ:

Ներքին ինքնաստեղծումի ու ինքնաճանաչման դժվարին մի շարժում, որոնց քննությունը՝ մի որոշակի հարցադրումով, կատարել ենք հոդվածում:

СИРАНУШ МАРГАРЯН

*Кандидат филологических наук, доцент,
заведующая отделом
Классической армянской литературы Института
литературы имени Манука Абегамяна НАН РА*

АНАЛИЗ ПРОИЗВЕДЕНИЙ ГАРЕГИНА СРВАНДЗТЯНЦА В СВЕТЕ МИФОЛОГИЧЕСКОЙ ШКОЛЫ

Резюме

В исследовании сквозь призму мифологической школы были проанализированы литературно-художественные произведения крупнейшего этнографа, фольклориста, педагога и общественного деятеля 60–80-х гг. XIX века Гарегина Срвандзтянца. Были выделены такие произведения Срвандзтянца, как «Гроц-броц», «Манана», «Торос Ахбар» и первая версия записанного им армянского эпоса «Сасунци Давид или Мгери Дур».

Цель исследования:

а) показать, какие обширные мифологические и мифоисторические пласты лежат в основе армянского мироустройства и национальной истории, записанной Срвандзтянцем;

б) рассмотреть разбросанный в разных книгах этнографа-фольклориста фольклорно-этнографический материал, народную поэзию, сказки и сказания в рамках одной общей системы, в соответствии с научной постановкой проблемы исследования и в соответствии с типическими и тематическими группировками;

в) представить, насколько они соответствуют историко-типологической парадигме мифологической школы.

Задачи исследования:

а) рассмотреть, как мифологический и исторический пласт национального наследия на разных временных этапах порождает

свою тождественность, формируясь в соответствии с ведущей идеей и эстетической функцией;

б) представить связь прошлого и настоящего в эпическом сказании, типологически устойчивые, узловые сообщения, функцию исторических и культурных кодов;

в) в соответствии с концепцией мифологической школы показать единство национальной биографии и экзистенциализма, феноменологию духа, которая предотвратила его разложение в мелких, изолированных временных пластах.

Представить в выводах результаты исследования.

Ключевые слова: Гарегин Срвандзтянци, мифологическая школа, парадигма миф-легенда-архетип-история, «Гроц-броц», «Манана», «Торос Ахбар», политическая нация, национальная онтология, исторические и культурные коды.

SIRANUSH MARGARYAN

*PhD, candidate of philological sciences, associate professor,
researcher of the Institute of Literature of the National
Academy of Sciences of the Republic of Armenia.*

ANALYSIS OF GAREGIN SRVANDZTIANTS'S WORKS IN LIGHT OF THE MYTHOLOGICAL SCHOOL

Abstract

The study has analyzed the literary and artistic works of Garegin Srvandztiants, the greatest ethnographer, folklorist, teacher and public figure of the 1860s–1880s of the 20th century through a prism of the mythological school. Srvandztiants's such works as “Grots-Brots”, “Manana”, “Toros Akhbar” and the first version of the Armenian epic “Sasuntsi David or Mheri Dur” recorded by him have been highlighted in the study.

The aim of the study:

a) to show what extensive mythological and mytho-historical layers underlie the theArmenian world order and the national history recorded by Srvandztians;

b) to consider the folklore and ethnographic material, folk poetry, fairy tales and legends scattered in different books of the ethnographer-folklorist within the framework of one general system, in accordance with the scientific formulation of the research problem and in accordance with typical and thematic groupings;

c) to present how much they correspond to the historical and typological paradigm of the mythological school.

Objectives of the study:

a) to consider how the mythological and historical layer of the national heritage at different time stages generates its identity, being formed in accordance with the leading idea and aesthetic function;

b) to present the connection between the past and the present in the epic tale, typologically stable, key messages, the function of historical and cultural codes;

c) in accordance with the concept of the mythological school, to show the unity of the national biography and existentialism, the phenomenology of the spirit, which prevented its decomposition in small- and isolated-time layers. To present the results of the study in the conclusions.

Keywords: Garegin Srvandztians, mythological school, myth-legend-archetype-history paradigm, "Grots-Brots", "Manana", "Toros Akhbar", political nation, national ontology, historical and cultural codes.